56. ԳՈՌԲԱԳՈՌ

Կէղնի, չէղնի մերմ՝ ու տղեմ՝ կէղնին։ Էդ մերն ու տղեն զիրար շատ կուզին։ Մերն կասե տղին.—Լաո՛, էկո ղքզիկ կարգիմ, քու ախ ու քյասարն հանիմ իմ սրտեն, չէղնի մեռնիմ, մնա իմ փորու մեշ։

Տղեն կասե.—Մերիկ, մ'էլի, մ'ըլի, իմ կարզվելու վախտ դրա չէկեր է, ես ու դու զիրար էդ խըդար կուզինք, էլու ախչիկ է, կիդա քղիկ սըթար չի տա, ես գինամ, օր էկավ, ղքզիկ կդնե շանք... մեշ, կիրիցե, էկո էդ սավտից վազ էկո։

Մոր վրեն չէղնի, կդնե զէրկու օտք մեկ սոլի մեշ, էդ հ'իգամ, էդ էրթամ՝ «Ղքզիկ կարգիմ, քու ախ ու քյասար չմնա սրտիս մեշ, թըղ հ'իգա իմ հարս, օրական կուզե քսան հեղ ղիս դնե շանք... մեշ թըղ իրիցե»։

Տղեն ինչ կէնե, մոր վրեն չէղնի։

Կասե.—Մերի՛կ, քու մուր քու հ'էրես։

Կէլնի կէրթա, յոթ դռնով զարկե զարկվի, գտնա խորոտիկ ախչիկըմ, առնե հ'իգա։

Կրերին պսակին, գոլ ու զուռնեն կզարկին, յոթն օր գիշեր ու ցերեկ հարսնեք կէնին։

Էդ կնիկ ու հարսն է, մեկ էրկու տարի հ'իրարու հետ կապրին, ինչ խըդար օր տղեն կուզե զուր մեր, հարս՝ յոթ խաթն է։ Օրըմ լէ տղեն կէլնի կէրթա թուճրութենի, կկանչե զկնիկ, կասե.—

Պնի՛կ, հանտե ես կէրթամ թուճրուութենի, կէղնի օր քանիմ՝ ամիս հ՝անգնամ չի գամ, ինչ խրդար օր ես զիմ մեր կուզիմ, դու պետք է յոթ իաթն հ՝ուզիս, ուրին պակասութին մը չթողիս, հար ես դառնամ հ՝իգամ։ Հ՝իգամ լսիմ իմ մոր աղեկ չրս էղեր ի, ես գինամ ու դու։

Հարս կասե.—Ես քոռցե՞ր իմ, քու մերն է, իմ լէ կեսուրն է, պուտրմ ծաղկի պես պիտի պահիմ, հար օր հ՝իգաս, օր էկար տեսար պակասութեն մ՝էղեր է ուրին, ի՛նչ գինաս էրե։

Տղեն է, կավտընա կնկա խոսքերուն, կմիամտի, կէլնի կէրթա։

Տղեն է, ղուր օտք կքաշե, չքաշե, հարս կէլնի գամրոսրմ վրը կեսրոջ գլխուն.—Շրն հեր, հար ե՞ր ես զքու դարդ քաշիմ, դնիմ վրը իմ դոշկին, պահիմ, ի՞նչ է, հ՝էլի լուսուն չայ, ի՞նչ է՝ հ՝էլի լուսուն խավա, ճրղարա, հ՝ըմն օր դու գինաս ուր հոր տուն հրմալ է ապրի։

Քաշ-քաշ ձեռքեն կբռնե, թալե դուրս։ Դրկիցներ կթափին, հ՝իգան. «Հայ հավար, հայ մադաթ, էդ ի՞նչ է էղի, ամոթ է, էդի քու կեսուրն է, պառավ է, հ՝ընկուկ է, հ՝ընկնավորուկ է, վաղ կդառնա հ՝իգա քու իրիկ, կլսե, ամոթ է»։

Հարս շատ հո՞գ է էրի իրիկ, կանե վրը գռան, հրմալ քաշ-քաշ, հողերու մեջ թափըլցնելով, կտանե դնե թարզու դուքան։

Կասե.—Շը՛ն հեր, քու տեխն էդ ա, գնա էրե թարզու աշկերտութենն, քու հոգին թըղ էլնա։

Պառավն է, թե մեկ, թե էրկու տարի կմնա էդ թարզու խեչ, լուսուն կէլնի կէրթա, հ՝իրկուն կդառնա կիգա, քունջրմ կուճուրի, կէլնի լուսուն մեկ լէ կէրթա։

Տղեն է, ղուր թուճրուութենի բաներ կառնե, կէլնի օր հ՝իգա, գիր կգրե, թե ես ֆըլան օր ճամբախ կէլնիմ, կիգամ հ՝էրկիր։

Հարսն է, զէդ օր կլսե, հավալկու պես կբերե թալի մինդար, զկեսուր կդնե վրեն, խահվեն, չայն ու ջըղարեն կդնե կշտի խետ, կթողե կէրթա։

Տղեն կիգա, կիգա կմտնի տուն, կիջքե տեսնա օր մեր քըռվով սուս ու սանթանաթով նստուկ է վրը ուր մինդրրին, մինակ հէրսի ըռանկ տեխ չէ։

Կասե.—Նանե՛, կիշքիմ քու սուս ու սանթանաթ տեխն է, քու հ՝էրսի ըռանկ մինակ տեխ չէ, չըմ գինա, չէղնի՞ քու հարս զքզիկ ասղեկ չպահեր է։

Մերն կասե.—Լաո՛, քոռնամ, իմ հարս ջատ աղեկ է էղի,—

չէ՞ ուր օծած խաչն է, կպահե զհարսի այիպներ,—մինակ զքոռ մարախն իմ էրի, հըմլա հ՚ընկեր իմ ու հ՚ընկնավորեր իմ։

Տղեն միամիտ, ի՞նչ գինա օր հարս ուր էտեեն էղեր է կուր ոռ գրող ուր մոր, կավտընա, կասե՝ զայեր հըմալ է։

Տղեն օր էկավ.—Մերի՛կ,—ասեց,—զիմ մարախ մ՚էնի, եար էկա։ Կբերե դնե վըր մինդրին, հ՚ըմն օր լուսուն չայ, խահվա, շըղարա, հ՚առջին հեզվընե յոթ խաթ աղեկ կիշքե մոր, հարս ուրնե բեթար կէղնի։

Կնցնի թե տարիմ՚, թե էրկուս, տղեն մեկ լէ կէլնի կէրթա թուճրութենի, կկանչե զկնիկ, թանպիհ կէնե, կասե.—Կնի՛կ, տես, հանդե ես կէրթամ թուճրութենի, իմ մոր աղեկ իշքիս, չայ ու խահվեն ուր կշտեն պակաս չէնիս, հար ես հ՚իգամ, հ՚իգամ տեսնամ, օր պակասութեն մ՚էղեր է, էլ ղու հ՚իսնե գիցի։

Հարս կասե.—Մարթ, ի՞նչ է կասիս, ես քոռցե՞ր իմ, իմ կեսրոշ գեշ իշքեմ, քու մերն է, իմ լէ կեսուրն է ու իմ մամու տեխ։

Տղեն կմիամտի, կէլնի կթորկե, կէրթա։ Օր կէրթա, հարսն էաստվածա դոմի կդնե կեսրոշ գլուխ, զծամեր կփաթե վըր ձեռաց ու հա՛յ-հա՛յ, քաշ-քաշ կքաշե, թալե դուրս։

Դրկիցներ կթափին կիգան, անզգամ կնկան ի՞նչ կառնանասին, զըմեն լէ կափաբերնե, էլ չըն կըռնա խոսա։

— Շըն հեր, հար ե՞ր ես զքու դարդ քաշիմ,—հըլոնգելով կառնե տանե դնե վարժատուն։— Քաշա՛նց, քու տեղ էդա է, էկեր է դաս է դոսե, կփետնա, խաչըմ չկըռնա հանե ուր հ՚էրես, յահայր մերըմ ասե, զնա քզիկ կարդալ սովրի։

Վարժապետ կասե.—Ջանը՛մ, էդի էլ նոր կարդալ չսովրի։

Հարսն անկաշ չէնե.—Ջարկեք գլխուն թըղ քոռնա, իմա՞ղ չսովրի,—կըսե։

Ախչիկներն է, էն խըդար կզարկին գլխուն, օր պառվու աչքեր դուրս կիգան։

Թե մեկ, թե էրկու տարի կմնա, տղեն գիր կգրե, թե ես ֆըլան ամսուն կիգամ։

Կնիկն է, զէդ օր կլսե, կբերե զմինդար թալե ու զկեսուր կդնե վրեն, չայ, խահվեն, շըղարեն կէնե վրեն քելըխ։

Տղեն կիգա կիշքե մոր ըռանկն ու մոր սանթանաթ, կասե.—Ջանը՛մ, էդա իմ մոր սանթանաթ տեխն է, ըռանկ տեխ չէ, չէ՞ղնի իմ կնիկ աղեկ չիշքեր է իմ մամուն, կհարցու։

Պառավն կասե.—Քոռցե՞ր իմ, իմ հարս հըմալ է պահի զիս, ինչ օր ուր մամուն։

Բանըմ չասե տղին, մեկ լէ զհարսի այիպներ կծածկե։

Տղեն մեկ լէ, կբերե զմամ դնե վրը դոշքին, հ՚առշվան պես զշայն ու զխահվեն կդնե կշտի հետ, կթողե կէրթա լուսուն դուքան, հ՚իրկուն կդառնա տուն։

Քանիմ՚ տարի էդ տեսակ կընցուն։

Տղեն մեկ լէ կէլնի կէրթա թուճրութենի։ Օր կէլնի կէրթա թուճրութենի, կկանչե զկնիկ, թանպիհ կէնե, կասե.—Կնի՛կ, հանտե, ես կէրթամ թուճրութենի, վերև աստված, ներքև քզիկ թասլիմ կէնիմ զիմ մերն ու կէրթամ, իմ մոր աղեկ իշիս, հար դառնամ հ՚իդամ։

Կնիկն կասե.—Մա՛րդ, էդա էղավ իրեք հեղ դու կէրթաս թուճրութենի, հարցու քու մամու մոտեն, ե՞ր իմ ուրին գեշ աչքով իշքե, հ՚էսօր իշքեմ։ Հըմալ պահիմ օր թող չնստի վրեն, օր նստավ, գանգատ էրեց քզիկ, ինչ գինաս էրե։

Տղեն է, զօտք քաշեց, քաղքի տակ հասավ, չհասավ, հարսն ասեց.—Ջանը՛մ, ղէդի թարզու աշկերտ էրի, վարժատան աշկերտ էրի, ըստհաղ ի՞նչ էնիմ։

Հ՚էլավ դուրս, տեսավ օր քանիմ՚ հատ մըթրըպ արշըմ կխաղցուն, ձեռքով էնեց, կանչեց, էկան։

Էկան, ասեց.—Էկեք ձզիկ կիտամ պառավըմ, տարեք խաղցուցեք ամիս օսկիմ՚ բերեք տվեք ընծիկ, հինգ ամիս լէ ձզիկ մոֆուլ, հինդ ամիսն օր թրմավ, բերեք մեկ լէ տվեք հ՚իս։

Մըրթրպներ էղան աշխրքով, կապ թալին պառվու վիզ, քաշին հանին դուրս, բերին զանգուլակըմ կախեցին պառվու ..., գլխեն ու առան հ՚ընկան քաղքներ։ Խաղցնելով գացին հ՚էլան էդ քաղաք օր պառվու տղեն թուճրութենի էր գացի։

Մըթրըպներն ին կառնին ու կընկնին քաղքի մեշ, կխաղցուն։ Էդ տղեն էլ թուճրի դուքան նստուկ կէղնի, կիգան կասին. «Լորկըներ բերած ին պառավըմ կխաղցուն, հըմալ կզարկին օր մարդու ճիկար կկտատի»։

Տղեն կլսե, կասե.—Գացեք, կանչեք հ՚իդա, քիչըմ լէ հ՚ոդա խաղա։

Կէրթան կանչին, կիգա։

Տղեն կիշքե օր՚ էդա ուր մեր, կցմքի ու կմնա ուր տեխ։

Կասե.—Մը՛ խաղցուցեք, ինչ օր կուզիք՝ կիտամ։

Էլ չասե իմ մերն է, կէլնի փեյ ու բազար կէնե, կիտա հարեր օսկի լորկընեբուն, զմեր կառնե ձեռքի ուրանց։

Կասե.—Յամա՜ն, խեղճ է, հերք է խաղցուք, ընծիկ մեր չկա, կգնիմ, տանիմ էնիմ ընծիկ մեր, սապապ է, ժամըմ կշինիմ, ղէդի օր ազատիմ։

Կառնե, կբերե ուր խոնախ, կբերե սնդուկըմ կգնե, մեջ կըլնա բամբակ, զմեր կդնե մեջ, փակե, չաքմաճի բալնեքն առնե ուր մոտ, զուր թուճրուքենի բեռներ կբռնե, գիր կգրե կնկան, թե ֆըլան օր կիգամ ու կհ՚էլնի, հ՚ընկնի ճամբախ հ՚իգա։

Կնիկն է, կտեսնա օր իրիկ հ՚էլեր է ճամբախ կիգա ու կեսուր դրռ լորկըներ չբերին, գինա դրռ ուր քաղքի մեջն ին, կէլնի հ՚ընկնի դռներ, հ՚ուր օր կզարկվի, չկըռնա գտնա, ճար կկտրի։ «Իմալ էնիմ, իմալ չէնիմ», կէլնի կէրթա խասապ խանեն, կիտա օսկիմ՚, կառնե օչխարըմ կյավդա, կբերե տուն, կբերե պաաընքե ու նստի տրփվի։

— Իմա՜լ իմ էրկու լուս քոռցավ, իմալ իմ կեսուր մեռավ։ Էրեց զիս էրերուն։

Կլսին դրկիցներ կթափին կիգան, կասին ի՞նչ է էղի։

Հարսն կասե.—Էլ ի՞նչ էղնի, իմ կեսուր մեռավ, զիմ դուռ դրեց ու գնաց։

— Հա՜յ հավար, հա՜յ մադաթ, քու կեսուր ե՞բ է մեռի. օր մեռեր է, զմզիկ հ՚որի՞ չկանչիր, հ՚իգենք լըվանենք ու պատրնքենք։

Կասե.—Ինք օսյաթ էր էրի, օր մարդ չկանչենք, ես լըվանեք, ու պատրնքեք։

Կասին.—Օր հըմալ է, վերցունք տանիք գերեզմներ պահինք ու հ՚իգանք։

Կտրփվի, կվերու զհինք զարկե գետին, կէղնի օյին-օյին.—Իմ էրկու լուսն է, վայ լուսի, ես քոռցե՞ր իմ, թողիմ զիմ թանգ ու թաբառուկ կեսուր վերցուք իմ աչքի հ՚առջևեն տանեք, ես պիտի իմ աչքի առջև պահիմ, հըմն օր էրթամ, հ՚իգամ, տրփվիմ ու հ՚իլամ։

Կէլնի կբերե տան մեկ քունջ կփորե ու կհորե, փարդեմ՚ լէ կկախե վրեն, կնստի հ՚ոնի ու կիլա։

Իրիկ կիգա, դրկիցներ կթափին կիգան, գլուխ խոջ կէնին. «Դու սաղ մնաս, ինչ արև պակսավ, էղնի քզիկ, էղած մեռած էր»

Կնիկն էնդին փարդի տակ, զուր միս կուտե, զծամեր կճեպռե՝ էդի իմա՞լ բան էղավ։

Դրկիցներ կէլնին կէրթան, իրիկն կնկան կասե.—Կնի՛կ, հ՝էլի արի էդա դին, էլ ինչ էնինք, աստծուց էր, խոմ դու զիմ մեր հ՝իսնե շատ չըս հ՝ուղի։

— Քա՝, մարդ, էդ ի՞նչ խըսա է կէնիս, ես մեռնիմ լէ հ՝ոդա կմեռնիմ։

Իրկա ճար կկտրի, կէլնի, կբռնի ձեռքեն, քաշե բերե նստցու, կասե.—Դը՛ կնիկ, պատմե տեսնաք իմա՞լ էղավ։

Կնիկ կպատմե կխըլըսի։

Մարդն կասե.—Ես կէլնիմ զիմ մեր կհանիմ, տանիմ գերեզմըներ փառքով ու պատվով պահիմ։

Կնիկն կասե.—Էդա չէղած բան է, անկարելի է, չըմ թողի։

Խոսքըմ էնդորնէ, մեկ էնդորնէ։ Կնիկ կասե.—Մարդ, ձեռք մի տա, տես կէղնի զոռբագոռ*։

Իրիկն է, քանի մը փեստուր կղարկե, կհանե ձևե զպատանք, ինչ տեսնա աղեկ է, օչխըբիմ՝ ջանդակ։

Կասե.—Կնի՛կ, էդա ի՞նչ է։

Կնիկն կասե.—Մա՛րդ, ես քզիկ չա՞սի ձեռք մ՝իտա հ՝ինք, կէղնի գոռբագոռ, հ՝որի՞ ձեռք տվիր։

Իրիկ կբերե, կբանա սնդուկ։ Կնիկ կտեսնա օր կեսուր պըլուլուկ բամբակ, դրուկ է սնդուկի մեջ։

Իրիկն կասե.—Ըպա է՞դ ինչ է։

Կդառնա ըստհաղ վըր մոր.—Մերի՛կ, չա՞սի քզիկ զիս մը՞ կարգի, էդի էլու ախչիկ է, քզիկ սըթար չի տա, ընծի հ՝որի՞ անկաճ չէրիր։

Մերն կասե.—Հա՛, լաո, իմ էրածն է. «Բըխո կըրըն,—քուրդն ասեր է,—դարման թունաս»**։

Նոր կբերե զկնիկ թութնի պես կբրդե, կվերցու տանե մոր տեխ կպահե։

Ուխտ կէնե, քանի մեր սաղ է, էլ չկարգվի։ Կնստին ուրանց կուտին ու կխմին։

Աստծուց հ՝իջավ իրեք խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լէ՝ անկաճ էնողին։

---

* Գերեզմանի մեջ կփակվի (Ծ. Բ.)։

** Ուր ձեռքով ընողին դեղ չկա (Ծ. Բ.)։